

Ստանդարտացում

(թեսթավորման հարցաշար)

N	Հարցեր	Պատասխաններ
1	2	3
1.	Ի՞նչ է տալիս ստանդարտացումը, որպես նյութական օբյեկտների ու գործընթացների կանոնակարգման գործունեության տեսակ	<ol style="list-style-type: none"> 1. Կարգավորվածություն և պարզություն 2. Բազմազանություն և ընդլայնում 3. Համակարգում և կոորդինացում
2.	Որո՞նք են ստանդարտացման արդյունավետությունն արտահայտող գործառույթները	<ol style="list-style-type: none"> 1. Տնտեսական, իրավական տեխնիկական և սոցիալական 2. Տնտեսական, գիտատեխնիկական և հաղորդակցական 3. Տնտեսական, սոցիալական և հաղորդակցական
3.	Որո՞նք են ստանդարտացման օբյեկտները	<ol style="list-style-type: none"> 1. Արտադրանք, ծառայություն, աշխատանք (գործընթացներ) 2. Շինարարություն, էներգետիկա, ինֆորմատիկա 3. Արդյունաբերություն, շինարարություն, գյուղատնտեսություն, ինֆորմատիկա
4.	Ո՞ր մակարդակներով է իրականացվում ստանդարտացման աշխատանքները	<ol style="list-style-type: none"> 1. Միջազգային, տարածաշրջանային, ազգային 2. Միջազգային, ազգային 3. Միջազգային, ազգային, կազմակերպության
5.	Ստանդարտացման նպատակները	<ol style="list-style-type: none"> 1. Պարտադիր նորմերի և պահանջների սահմանում 2. Հանձնարարական նորմերի և պահանջների սահմանում 3. Միջազգային առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացում
6.	Որո՞նք են Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտները	<ol style="list-style-type: none"> 1. Հայաստանի Հանրապետության ստանդարտները (ՀՍ) 2. Հայաստանի Հանրապետության ստանդարտները (ՀՍ), միջպետական ստանդարտները (ՉՍՍ) 3. Հայաստանի Հանրապետության ստանդարտները (ՀՍ), միջպետական ստանդարտները (ՉՍՍ) և ստանդարտացման ազգային համակարգով ընդունված այլ պետությունների ստանդարտները (ՉՍՍ Ռ, NF, DIN և այլն), Եվրոպական ստանդարտները (EN), միջազգային ստանդարտներ (ISO)
7.	Ո՞վ է ՀՀ-ում հաստատում ազգային ստանդարտները	<ol style="list-style-type: none"> 1. Ստանդարտացման ազգային մարմինը (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը) 2. Ստանդարտների ազգային ինստիտուտը 3. ՀՀ կառավարությունը
8.	Որո՞նք են ստանդարտների տեսակները	<ol style="list-style-type: none"> 1. Հիմնադրական ստանդարտներ (կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական), արտադրանքի և ծառայությունների ստանդարտները 2. Հիմնադրական ստանդարտներ (կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական), արտադրանքի և ծառայությունների ստանդարտներ, վերահսկման (փորձարկումների, չափումների,

		վերլուծության) մեթոդների ստանդարտներ, աշխատանքների (գործընթացների) ստանդարտներ 3. Արտադրանքի և ծառայությունների ստանդարտներ
9.	Որո՞նք են ՀՀ-ում գործող ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը	1. Տեխնիկական կանոնակարգերը, ազգային ստանդարտները, կազմակերպության ստանդարտները, տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչները, շինարարական նորմերը և կանոնները 2. Ազգային ստանդարտները, տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչները, տեխնիկական պայմանները, կազմակերպության ստանդարտները, ստանդարտացման կանոնները, ուղեցույցները 3. Տեխնիկական կանոնակարգերը, ազգային ստանդարտները, կազմակերպության ստանդարտները, սանիտարական նորմերը և կանոնները, ստանդարտացման կանոնները և ուղեցույցները
10.	Ո՞ր նորմատիվ փաստաթղթերն են ենթակա պարտադիր կիրառման համար	1. Ազգային ստանդարտները 2. Տեխնիկական կանոնակարգերը 3. Տեխնիկական պայմանները
11.	Ովքե՞ր են ՀՀ-ում ստանդարտացման գործընթացի մասնակիցները	1. Ստանդարտացման ազգային մարմինը, ստանդարտների ազգային ինստիտուտը, պետական կառավարման մարմինները, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները, իրավաբանական անձինք 2. Միջազգային ստանդարտացման կազմակերպությունը (ISO), ստանդարտացման ազգային մարմինը, ստանդարտների ազգային ինստիտուտը, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները և իրավաբանական անձինք 3. Միջազգային ստանդարտացման կազմակերպությունը (ISO), միջպետական ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման խորհուրդը (EASC), ստանդարտացման ազգային մարմինը, ստանդարտների ազգային ինստիտուտը, պետական կառավարման մարմինները, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները և իրավաբանական անձինք
12.	Ո՞վ է ընդունում ազգային ստանդարտները	1. Ստանդարտացման ազգային մարմինը 2. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները 3. Ստանդարտների ազգային ինստիտուտ
13.	Ո՞վ է ՀՀ-ի տարածքում գործողության մեջ դնում ազգային ստանդարտները	1. Ստանդարտների ազգային ինստիտուտը 2. Ստանդարտացման ազգային մարմինը 3. ՀՀ կառավարությունը
14.	Որո՞նք են օրենսդրական և իրավական հիմքերը ՀՀ-ում ստանդարտացման աշխատանքները իրականացնելու համար	1. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը, «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղականություն վարելու

		<p>մասին» ԱՊՀ երկրների միջկառավարական Համաձայնագիրը, Միջպետական ստանդարտացման համակարգի հիմնադրությամբ ստանդարտները և այլ փաստաթղթերը, ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտները</p> <p>2. «Ստանդարտացման մասին», «Համապատասխանության գնահատման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքները</p> <p>3. «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» ԱՊՀ երկրների միջկառավարական համաձայնագիրը, «Ստանդարտացման մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքները</p>
15.	Որո՞նք են ՀՀ-ում ստանդարտացման բնագավառի զարգացման հիմնական նպատակները	<p>1. Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը, արտադրանքի մրցունակության և որակի բարձրացումը</p> <p>2. Արտադրանքի մրցունակության և որակի բարձրացումը, ստանդարտացման աշխատանքների ներդաշնակեցումը միջազգային մեթոդների և գործելակերպի հետ</p> <p>3. Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը, մարդու կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի անվտանգության ապահովումը, արտադրանքի մրցունակության և որակի բարձրացումը</p>
16.	Ովքե՞ր են մշակում ազգային ստանդարտները	<p>1. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները</p> <p>2. Պետական կառավարման մարմինների ստանդարտացման ստորաբաժանումները, կազմակերպությունները</p> <p>3. Հասարակական կազմակերպությունները</p>
17.	Ո՞վ է իրականացնում պետական քաղաքականություն ստանդարտացման բնագավառում	<p>1. Ստանդարտների ազգային ինստիտուտը</p> <p>2. Ստանդարտացման ազգային մարմինը</p> <p>3. ՀՀ նախարարությունները</p>
18.	Ի՞նչ պահանջներ են սահմանվում տեխնիկական կանոնակարգերով	<p>1. Անվտանգության, համապատասխանության գնահատման ընթացակարգերի, տերմինաբանության, փաթեթավորման, մակնշման</p> <p>2. Անվտանգության, սպառողական, համապատասխանության գնահատման ընթացակարգերի</p> <p>3. Անվտանգության, համապատասխանության գնահատման ընթացակարգերի</p>
19.	Ի՞նչ կարգավիճակով են կիրառվում միջպետական ստանդարտները (ՀՊՍ) և Ռուսաստանի Դաշնության ստանդարտները (ՀՊՍ Ռ)	<p>1. Ուղղակի կիրառում առանց վերաձևակերպման</p> <p>2. Վերաձևակերպման միջոցով որպես ազգային ստանդարտ (հայերեն բնագրաբնույթ տեքստը) առանց լրացուցիչ պահանջների</p> <p>3. Վերաձևակերպման միջոցով որպես ազգային ստանդարտ (հայերեն բնագրաբնույթ տեքստը) համապատասխան լրացումներով</p>

20.	Ո՞րն է ազգային ստանդարտների կիրառման կարգավիճակը	<ol style="list-style-type: none"> 1. Կամավոր և պարտադիր 2. Պարտադիր 3. Կամավոր
21.	Տեխնիկական պահանջներ սահմանող, որ իրավական նորմատիվ ակտերին են հանդիսանում տեխնիկական կանոնակարգեր	<ol style="list-style-type: none"> 1. Միջազգային պայմանագրերով ընդունված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացրած փաստաթղթերը, ՀՀ օրենքները և ՀՀ կառավարության որոշումները 2. ՀՀ օրենքները և ՀՀ կառավարության որոշումները 3. ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, ՀՀ գերատեսչական ակտերը
22.	Որո՞նք են ստանդարտացման գերակայող ուղղությունները	<ol style="list-style-type: none"> 1. Անվտանգություն, շրջական միջավայրը, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ռեսուրսների խնայում, ծառայություններ, որակ 2. Անվտանգություն, շրջական միջավայր, տերմինաբանություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ռեսուրսների խնայում, ծառայություններ, որակ 3. Անվտանգություն, տերմինաբանություն, տեղեկատվական, տեխնոլոգիաներ, համատեղելիություն
23.	Ո՞րն է ստանդարտացման սկզբունքը	<ol style="list-style-type: none"> 1. Որակի ապահովումը ստանդարտների մշակման ժամանակ 2. Փոխհամաձայնության ապահովում ստանդարտների ընդունման ժամանակ 3. Տեղեկատվության ապահովում ստանդարտների մշակման ժամանակ
24.	Ո՞րն է ստանդարտացման նպատակներից	<ol style="list-style-type: none"> 1. Գիտության և տեխնիկայի առաջընթացի ներդրումը 2. Շահագրգիռ կողմերի փոխհամաձայնության ապահովումը 3. Տեխնիկական կանոնակարգերի պահանջների ապահովումը
25.	Ո՞րն է ստանդարտացման սկզբունքներից	<ol style="list-style-type: none"> 1. Արտադրանքի և ծառայության որակի բարձրացումը 2. Չափումների միասնականությունը 3. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին հակասող ստանդարտների ընդունման անթույլատրելիությունը
26.	Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները ձևավորվում են	<ol style="list-style-type: none"> 1. Լիազոր մարմնի հրամանով 2. Կամավոր հիմունքներով 3. Պարտադիր հիմունքներով
27.	Տեխնիկական կանոնակարգերի մշակման համար հինք են ընդունվում	<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ օրենքն, գերատեսչական ակտեր և ստանդարտները 2. ՀՀ կառավարության որոշումները և ազգային ստանդարտները 3. Միջազգային կամ դրանց հետ ներդաշնակ ազգային ստանդարտները

28.	Տեխնիկական կանոնակարգերը ուժի մեջ են մտնում դրանց հրապարակման պահից առնվազն	1. 12 ամիս հետո 2. 3 ամիս հետո 3. 6 ամիս հետո
29.	Տեխնիկական կանոնակարգերի նախագծերը ծանուցում է Առևտրի համաշխարհային կազմակերպություն	1. ՀՀ կառավարությունը 2. ՀՀ պետական կառավարման մարմինները 3. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը
30.	Ո՞րն է տեխնիկական կանոնակարգերի ընդունման նպատակը	1. Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը 2. Սպառողների թյուրիմացոյան մեջ զցող գործոնների կանխարգելումը 3. Գիտատեխնիկական առաջընթացի նպաստումը
31.	Հայաստանի Հանրապետության ստանդարտներին տրվում է դասիչ	1. ՀՕՍՍ 2. ՀՍՍ 3. ԻՍՕ
32.	Ազգային ստանդարտները մշակվում և ընդունվում են	1. Իրավական ակտերին համապատասխան 2 Տեխնիկական կանոնակարգերով 3.Ստանդարտացման համակարգերի ստանդարտներով
33.	Տեխնիկական պայմանները մշակում և հաստատում են	1.Ստանդարտների ազգային ինստիտուտը 2. Իրավաբանական անձիք և անհատ ձեռնարկատերերը 3. Հասարակական կազմակերպությունները
34.	Ո՞վ է ընդունում հանրապետության դասակարգիչները	1. ՀՀ կառավարությունը 2. ՀՀ արդարադատության նախարարությունը 3.Ստանդարտացման ազգային մարմինը
35.	Ո՞վ է վարում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը	1.Ստանդարտացման ազգային մարմինը 2. Ստանդարտներ ազգային ինստիտուտը 3. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը
36.	Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մասին տեղեկատվությունը իրականացվում է	1. Անվճար 2. Պետական բյուջեից 3.Պայմանագրային հիմունքներով
37.	Ազգային ստանդարտները հրատարակում է	1. Ստանդարտացման ազգային մարմինը 2. Ստանդարտներ ազգային ինստիտուտը 3. ՀՀ արդարադատության նախարարությունը
38.	Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները ստեղծում և նրանց գործունեությունը համակարգում է	1.Ստանդարտների ազգային ինստիտուտը 2.Ստանդարտացման ազգային մարմինը 3. Պետական կառավարման մարմինները
39.	Որ ստանդարտացման ՆՓ-ում են սահմանված կոնկրետ արտադրանքի տեսակին և մակնիշին ներկայացվող պահանջները և նորմերը	1. Ազգային ստանդարտում 2. Տեխնիկական պայմաններում 3. Կազմակերպության ստանդարտներում
40.	Ով է իրականացնում ստանդարտացման բնագավառում տեղեկատվության ապահովումը	1. Ստանդարտացման ազգային մարմինը 2. Ստանդարտացման ազգային ինստիտուտը 3. ՀՀ կազմակերպությունները
41.	Ինչպիսի նախադրյալներ է ստեղծում առևտրատնտեսական հարաբերություններում ազգային ստանդարտների ներդաշնակեցումը	1. Արտադրանքի ինքնարժեքի նվազեցում, Առևտրում տեխնիկական խոչընդոտների նվազեցում, Արտադրանքի և ծառայությունների անվտանգության ապահովում

		<p>2. Արտադրանքի մրցունակության և որակի բարձրացում, Առևտրում տեխնիկական խոչընդոտների նվազեցում, Արտադրության ծավալների մեծացում</p> <p>3. Արտադրանքի մրցունակության և որակի բարձրացում, Առևտրում տեխնիկական խոչընդոտների նվազեցում, Ձեռնարկատերերի շահերի պաշտպանում արտաքին և ներքին շուկայում</p>
42.	Ով է որոշում ստանդարտների կիրառումը ՀՀ-ում	<p>1. Իրավաբանական անձիք և ձեռնարկատերերը</p> <p>2. Ստանդարտացման ազգային մարմինը</p> <p>3. Ստանդարտների ազգային ինստիտուտը</p>
43.	Որ փաստաթղթով է սահմանվում ստանդարտների մշակման ընդունման և կիրառման միջազգային գործելակերպը (կոդեքսը)	<p>1. Առևտրի համաշխարհային կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման» համաձայնագիրը</p> <p>2. ԱՊՀ երկրների Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման ոլորտում միասնական քաղաքականություն վարելու համաձայնագիրը</p> <p>3. Միջազգային ստանդարտացման կազմակերպության ստանդարտների մշակման և ընդունման դիրեկտիվները</p>
44.	Ով է համակարգում տեխնիկական հանձնաժողովի աշխատանքները	<p>1. Ստանդարտացման ազգային մարմինը</p> <p>2. Պետական կառավարման մարմինները</p> <p>3. Ստանդարտների ազգային ինստիտուտը</p>
45.	Ով է գնահատում մշակված ստանդարտների նախագծերը	<p>1. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները և կազմակերպությունները</p> <p>2. Ստանդարտների ազգային ինստիտուտը և կազմակերպությունները</p> <p>3. Ստանդարտացման ազգային մարմինը և պետական կառավարման մարմինները</p>
46.	Ով է քվեարկում միջպետական ստանդարտների ընդունման մասին	<p>1. Ստանդարտների ազգային մարմինը</p> <p>2. Ստանդարտների ազգային ինստիտուտը</p> <p>3. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները</p>
47.	Ով է քվեարկում միջազգային ստանդարտների ընդունման մասին	<p>1. Ստանդարտների ազգային ինստիտուտը</p> <p>2. Ստանդարտների ազգային մարմինը</p> <p>3. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները</p>
48.	Ով է հանդիսանում ՀՀ-ում ստանդարտացման ազգային մարմինը	<p>1. Ստանդարտների ազգային ինստիտուտը</p> <p>2. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը</p> <p>3. ՀՀ կառավարությունը</p>
49.	Ով է հաստատում ՀՀ ստանդարտացման ծրագիրը	<p>1. Ստանդարտների ազգային մարմինը</p> <p>2. Ստանդարտների ազգային ինստիտուտը</p> <p>3. ՀՀ կառավարությունը</p>

50.	Որոնք են ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների գործառույթները	<ol style="list-style-type: none"> 1. 1.Ստանդարտների մշակում 2. Ստանդարտների փորձաքննություն 3. Ստանդարտացման ծրագրի վերաբերյալ առաջարկությունների տրամադրում 2. 1. Ստանդարտների մշակում և ընդունում 2. Ստանդարտների փորձաքննություն և գրանցում 3. Ստանդարտացման ծրագրի մշակում 3. 1. Ստանդարտների մշակում 2. Ստանդարտների փորձաքննություն 3.Ստանդարտների ֆոնդի վարում
51.	Արտադրանքի ինչպիսի նորմեր և պահանջներ է սահմանվում տեխնիկական կանոնակարգում	<ol style="list-style-type: none"> 1. Արտադրանքի անվտանգության, տերմինաբանության, մակնշման և փաթեթավորման 2. Արտադրանքի անվտանգության և սպառողական (շահագործման, ֆիզիկաքիմիական) 3. Սպառողական (շահագործման, ֆիզիկաքիմիական)
52.	Ով է իրականացնում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի պետական գրանցումը	<ol style="list-style-type: none"> 1. Ստանդարտների ազգային մարմինը 2. ՀՀ կազմակերպությունները 3. Ստանդարտների ազգային ինստիտուտը